

ՊԱՅՄԱՆՔ

ՊՈՒԼԱՐԻԱ

Տարեկան . . 12 ձր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու քիւ մեկ ծրարով
Տարեկան . . 14 ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2.60 Տոլար
Վեցամսեայ 1.50 "
Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման տոհր
20 անդրիս



Լ Ր Ա Ք Ի Ր

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ՔՈՐԵՔՇԱԲԻ ԵՒ ՇԱԲԱԹ

ՀԱՍՏԻ

Rédaction du journal

„Iravouk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրութիւնք եւս

չեմ տրուիր

ԹՈՒՐՔԻԱ

Ի՞նչու համար Սուլթանը բարենորոգում չկրնար գործադրել Մակեդոնիոյ մէջ:

Այս հարցման հետեւեալ կերպով կը պատասխանէ Մուշրուման Մաւստոնիէնը.

«Այս հարցումը, կըսէ այդ թերթը, անտեղի կը թուի անոնց որոնք կերեւակայեն թէ Ապտիւլ Համիտը իրեն հաճոյ թուածը իր կայսրութեան մէջ գործադրել տալու բացարձակ իշխանութիւնը ունի. բայց շատ բնական պիտի թուի ամեն անոնց որոնք կը հետեւին թուրքիոյ քաղաքական և ընկերական կացութեան:

Ապտիւլ Համիտի ամենակարողութիւնը պայմանական է. Այն գոյութիւն չունի երբ իրեն նեցուկ եղող դասակարգերու յայտնի շահերուն համապատասխան չը գործադրուի: Ապտիւլ Համիտի վարչական գրութիւնը անձնական չէ, թէեւ դա իր անձնականութեան դրօշը կը կրէ. եթէ այդպէս չըլլար, մինչեւ հիմա դժգոհներուն կողմէ մէջտեղէ վերցուած պիտի ըլլար: Անոր ամենակարողութիւնը կը հանգչի այն քաղաքական գործիչներուն վրայ որոնց ձգտումներուն կը համակցուի և ծրագրի. նին կիրականացնէ:

Այդ գործիչներն են Եւրոպայի պալատին խումբէն գաւա, բանակին բարձր հրամանատարները, իսլամ ժողովուրդի բարձրագոյն դասը որ անպատիժ կերպով կրնայ շահագործել քրիստոնեաները շնորհիւ Սուլթանի արդի քաղաքականութեան: Այս գործիչները կօզնեն Ապտիւլ Համիտին ներքին ճնշիչ քաղաքականութեանը և արտաքին դիմադրութեանը: Արդի վարչական գրութիւնը, առանց անոնց աջակցութեան, պիտի տապալէր: Եւ այս աջակցութիւնը չպիտի վայելէր Սուլթանը, եթէ անոնց շահերուն ներհակ ուղղութեամբ իր քաղաքականութիւնը բարեփոխէր:

Ընկերական տեսակէտով նկատի առնենք Մակեդոնիոյ բարենորոգման խնդիրը: Պետութեանց ա.

ռաջարկած սկզբունքները եթէ իր կարեւորագոյն նահանգներէն միոյն մէջ Ապտիւլ Համիտը գործադրէր, անոր վարչութեան ուժ տուող ընկերական խումբը ի՞նչ ընթացք պիտի բռնէր:

Մակեդոնիոյ համար հարկ եղած և մեծ պետութիւններէն գծուած բարենորոգումները, եթէ իսկապէս գործադրուէին, իբր արդիւնք պիտի սեննային դարեցնել կեղեքումները և պախշիչները, (որով կապրին մեծ պաշտօնեաները), բանակին բարձր աստիճանաւորներու յայտնապէս ի գործ դրած գողութիւնները և զիջումները, քրիստոնեայ և իսլամ իշխանութիւններուն վրայ իսլամ ժողովուրդի մէկ մասին գործած հարստահարութիւնները, Այն բերորը որոնց վրայ կը թնամ է Ապտիւլ Համիտի վարչութիւնը՝ կապրին ապօրինութեան, հարստահարութեան, երկիրը տիրող անապահովութեան, դատարաններու անարդարութեան և կառավարական պաշտօնեաներու շնորհիւ, Բարենորոգումը հասոյթի այդ բոլոր աղբիւրները պիտի ցածքեցնէր, օրինակելի թողական պիտի սահմանէր: Օրինաւոր վարչութեան մը տակ, ի՞նչքէն էր այն սպան որ այժմ բանակին հայթայթիչներուն հետ յայտնի կերպով գայթակղելի սակարկութիւններ կընէ և կը թողարկէ զինուորներուն որ կըրցած կերպով իրենց ապրուստը ճարեն, այսինքն գողութեամբ կամ յաբաւակութեամբ: Ի՞նչ էր զատաւորը՝ որ այժմ իրաւունքը աւելի շատ ընծայ տուողին կը ծախէ, եթէ ստիպուէր արդարութեամբ և օրէնքով դատել: Ի՞նչ ընէին պաշտօնեաները եթէ ալ չկրնային գոյնալ, պաշիպօզուգները՝ եթէ ազատ չըլլային այլեւս կողոպտելու: Ատոնք աւելնէր, սպայ, դատաւոր, պաշտօնեայ, աւագակ և պաշիպօզուգ, բարենորոգման մէջ կը տեսնեն իրենց շահագործումին վերջնալը, ու առջի ձեւով ապրելու անկարելիութիւնը և կործանումը: Այս պատճառաւ, անոնք չափազանց հակառակ են բարենորոգման գործունէութեան: Եւ անոնց հակառա-

կութիւնը այնքան մեծ է որ, Սուլթանին արդի վարչութիւնը մեծ եռանդով և հաւատարմութեամբ պաշտպանել յետոյ, անոնք չպիտի վարանէին անոր դէմ ելնել, եթէ այդ վարչութիւնը փոփոխութիւն կրէր: Հիւս ծառաներ՝ որոնց փութաշնուկութիւնը ու է ոճիւրի առջեւ չընկրկեցաւ, որչափ ատեն որ Ապտիւլ Համիտ զանոնք ապրեցուց, նոյն Սուլթանին դէմ պիտի ելնէին անոնք՝ եթէ սա ցամքեցնէր անոնց հասոյթի աղբիւրները: Ու այդ օրը Ապտիւլ Համիտի դահը մեծապէս պիտի սարսի:

Մակեդոնիոյ բարեկարգելով, Ապտիւլ Համիտ իրեն դէմ պիտի չունենար միայն այն մարդերը որոնց շահերուն վնաս կը հասցնէ. այլ միանգամայն պիտի կատղեցնէր իւլէմաներն ու աստուածաբանութեան վարդապետները, որոնք անոր վարչութեանը լաւագոյն պաշտպաններն են: Յայտնի է թէ Ապտիւլ Համիտի քաղաքականութիւնը համախառնական ներշնչումներ ունի: Այդ քաղաքականութիւնը միւսլիմաններու մօքին մէջ արծարծեց կրօնական մոլեռանդութիւնը, Եւրոպայի ու անոր բաղադրութեան դէմ ատելութիւն մը, ու արհամարհանք՝ դէպի հարստահարեալ քրիստոնեաները: Ապտիւլ Համիտ սեղմ յարաբերութիւններ կը մշակէ այն հզօր ու խորհրդաւոր զառնիւններու հետ, որոնց մասին վերջերս Մարքի դէպքերուն առթիւ խօսուեցաւ: Սուլթանը պալատին մէջ, իր քովը հաստատեց անոնց պարագլուխներէն մէկ քանին, որոնց յաճախ քաղաքական խնդիրներու մասին խորհուրդ կը հարցնէ: Ու շատ անգամ ալ անոնց խորհուրդներուն կը հետեւի: Ամէն պարագայի մէջ՝ անոնց զաղափարներովը կը ներշնչուի, ու անոնց միջնորդութեամբ կը հաղորդակցի իր միւսլիման հպատակներուն հոգիին հետ, որոնց մօտ իւլէմաները իր քաղաքականութեանը թարգմանիւնը կը ըլլան: Այդ իւլէմաներն ու տէրվիչները որոնք քրիստոնեաներու յառաջդիմութեան ու Եւրոպայի դէմ ատելութենէ կը փրկ-

րին, ի՞նչ պիտի չըսէին, եթէ երբէք Ապտիւլ Համիտ, Եւրոպայի սպառնալիքին առջեւ, քրիստոնեաներու ինպատակ հրատարակուած բարեկարգութիւնները լաւաւ զգիմասէր ոգիով մը գործադրէր: Յայտնապէս անոնք պիտի ըսեն թէ Ապտիւլ Համիտ մատնիչ մըն է, ու պիտի չվարանէին անոր դէմ քաղաքականութիւններ ընելու: Ու ամէն մարդ գիտէ թէ անոնց ոյժը ինչ է:

Ապտիւլ Համիտ իր կուսակիցներուն ու իր մարդերուն գերին է. Ու թուրքիոյ մէջ հաստատած է վարչական ու զինուորական այնպիսի կառավարչութիւն մը, որ զինքը պիտի ճգմէ այն ատեն որ զայն փոխել ուզէ: Ուղեղով իր արբանեակները իրեն կապել անոնց ախորժակներովը, ա՛յլ կարող չէ զանոնք գործածել այնպիսի գործերու, ուր կը պահանջուի պարկեշտութիւն, աշխատութիւն ու անշահախդիր անձնուիրութիւն: Այն օրը երբ ուզէ արդար ու ազան քաղաքականութեան թուական մը բանալ, իրեն դէմը պիտի գտնէ բոլոր անոնք որոնք ինքը հարուստ ու ուժով ըլլաւ: Ապտիւլ Համիտի վարչութիւնը թուրքիոյ մէջ թայանի դրսւս մըն է, ու կարելի չէր որ ուրիշ կերպ ըլլար:

Բայց այն ատենը, պիտի ըսուէր, Մակեդոնական խնդիրը չի լուծուիր, մինչեւ որ յառաջ չի գայ յեղափոխութիւն մը որ Սուլթանը զահնկէց ընելով, անոր վարչութիւնն ալ կը քայքայէ: Մակեդոնական խնդիրը կրնայ գուցէ կարգադրուիլ առանց բոլոր այս խառնակութեանց, բայց ոչ երբէք Սուլթանին կամքովը: Ապտիւլ Համիտ ոչ կուզէ, ոչ քալ կըրնայ իր յատուկ նախաձեռնութեամբ Մակեդոնիոյ բարենորոգել: Բարեկարգութիւն կըլլայ միայն այն ատեն, երբոր Եւրոպան Սուլթանին վրայ դրական բռնութիւն բանեցնէ, ըլլայ Մակեդոնիոյ հողին վրայ զօրք հանելով, ըլլայ թրքական նաւահանգիստներու մէջ նաւային ցոյցեր սարքելով: Այս հրամայական ու փոստիկոտ եղանակով յայտնուած Եւրոպայի կամքը

Սուլթանը պիտի հարկադրէր բա-
րեկարգութեան ձեռնարկելու, ու
միանգամայն առաջը պիտի առ-
նէր ընկերային ու կրօնական խմբ-
բաններու թշնամանքին, խմբակ-
ներ՝ որոնք Սուլթանին պիտի չը
ներէին այդ զինուորները, եթէ ա-
նոնք իր նախաձեռնութեանը ար-
դիւնքը բլլային:

Ուրեմն, ամեն կերպով Եւրո-
պայի զինուորական միջամտու-
թիւնը հարկաւոր է, ըլլայ Ապ-
տիւլ Համիտի դիմագրութիւնը
ոչնչացնելու համար, ըլլայ՝ այդ
բարեկարգման Սուլթանին բար-
եացակամութեամբ գործադրուե-
լով՝ զանազան շրջանակներու մէջ
յառաջ բերելիք հակահարուածին
առաջը առնելու համար:

ՕՐՈՒՒԱՆ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԹՈՒՐԻՔԻԱ ՈՒ ՄԱԿԵՌՈՒՄԱ

Թաւմ Մակեդոնիոյ վրայ հե-
տեւեալ խմբագրականը կը հրա-
տարակէ իր վերջին մէկ թուովը:

Սուլթանը կամակատարութիւնը ու-
նեցաւ պետութիւնները սպասել չտա-
լու: Ու երէկ իսկ, անոր արտաքին
գործերու նախարարը՝ Թէֆիկ փաշա
Դրան պատասխանը հաղորդեց Ալբա-
տրիոյ դեսպան՝ Մ. Գալիսի ու Ռու-
սիոյ դեսպան՝ Մ. Ջինովիէվի ներկա-
յացուցած յիշատակագրին նկատմամբ:

Այդ պատասխանը հաւանութիւն
մըն է:

Այս չափազանց փոթկոտ համա-
կերպութիւնը անխուսափելի էր:
Աւստրո-ուոս ծրագիրը արդարեւ, ու
մինչեւ ցնոր տնտէսութիւն, ծր-
գիր մըն է միայն:

Արդ, եթէ թուրք կառավարու-
թիւնը բարեկարգութիւններէ չախոր-

ծիր, ծրագիրները անոր սուղի չեն
նստիր, ու այժմ անոր ներկայացուած
ծրագիրը զայն խրաչեցնելու ունի
հանգամանքէ դուրի էր:

Այս ծրագիրը, նախկին ծրագիր-
ներէ, ու նոյնիսկ Սպարիւլ-Համիտի
կողմէ վերջին Դեկտեմբերին եղած
հրամանագրութեանէ աւելի համեստ,
կը բաւականաւոր վարչական եւ ե-
րկրակազմ տեսակետով մէկ քանի
փոքր բարեկարգութիւններով, շատ
երբ մնալով 23 տարիի չափ առաջ ա-
րեւելեան Ռումելիի լանձնաժողովոյն
մշակած բարեկարգութեան ծրագրէն:
Ու Թուրքիոյ նկատմամբ այս ծրագ-
րին ծայրայեղ չափաւորութիւնը գոր-
ծելու աղէկ ձեւ մըն է, որուն Սուլ-
թանը անյայտաբար պատասխանել ու-
զեց:

Պատշաճ է սակայն շատ չուտ ան-
նատուր չըլլալ լաւատեսութեան մը՝
զոր այս կատարիւր համաձայնութիւնը
արդարացի կը թուի: Կոմս Լամոտորի
ու Կոմս Կուլիսովսքի արդարեւ պատ-
ճառ մը միայն ունէին իրենց պահան-
ջումները էապէս անհրաժեշտ նկատ-
ուած բաներու վերաձեւում: պատճառը
իրենց պահանջած բարեկարգութեանց
անկեղծ գործադրութիւնը զի բացակայ
յառաջ կուգար: Ուրեմն, միմիայն
բարեկարգութեանց գործադրութեանը
միջոցին կարելի պիտի ըլլայ Թուր-
քիոյ անկեղծութեանը մասին գիտակ-
ցօրէն կարծիք յայտնել, ու միամտու-
թիւն կըլլար հիմակուրէն իսկ Թուր-
քիոյ ապագայ բարեկարգիչ փութա-
յանութեանը մասին չափազանց նպաս-
տաւոր եղբակացութիւններ հանել:

Դժբախտապէս ստույգ է որ եթէ
զրան հաւանութիւնը գիւրացնելու
համար ամէն կերպ միջոցներ ձեռք
առնուեցան, միւս կողմէ այդ յան-
նապետութեան գործադրութիւնը ինչ
միջոցներով հակակշիռ ենթարկելու
խնդրով շատ աւելի քիչ զորակեցաւ:
Կը թուի թէ այդ հակակշիռը, որ-
պէս զի աղբուր ըլլայ, հարկ է որ
կրկին ըլլայ: ու եթէ Պոլիս, Լեւո-
տրիոյ ու Ռուսիոյ դեսպանները, ո-
րոնց միացան Ֆրանսայի, Իտալիոյ,
Գերմանիոյ ու Անգլիոյ դեսպանները,
այդ հակակշիռը գործադրելու համար

պահանջուած բոլոր հանգամանքները
կրնան յայտնեն, պատշաճ է որ Մա-
կեդոնիոյ մէջ ալ մասնաւոր քննիչներ
(քոմիսէր) նոյն պաշտօնը ունենան:
Եթէ ոչ, չենք հասկնար թէ այնքան
երկար ատենուան մէջ պատրաստուած
այս միջամտութեան պետութիւնները
ինչ շահ պիտի ունենային, քանի որ
իրոք միակ արդիւնք՝ Թուրքիան իրենց
ստուած պիտի ըլլար խոստումներ մի-
այն, — որոնք զեկտ. ամսուն մէջ ե-
ղածներէն ալ նուազ են նոյն իսկ —
ու պետութիւնները, ինչպէս զեկ-
տեմբերին, անկարող են այդ խոստում-
ներուն անկեղծութիւնը ապացուցա-
նել:

Անհրաժեշտ է այս հսկողութիւնը
երաշխատել: Արդարեւ խնդրոյ ա-
ռարկայ եղողներու աչքին, եղած խնդ-
րանքներու չափաւորութիւնը կրնայ
արդարեւ միայն անոնց իրագոր-
ծութեամբ: Արդէն կրնանք թէ
Ֆիլիպէի, Սոֆիայի, Պէլլիպատի մէջ
ու այլ աւելի Մակեդոնիոյ վիլայէթ-
ներուն մէջ, այդ չափաւորութիւնը
զարմանք ու զոգոհութիւն պատճառեց:
Զարմանքը ապշութեան ու զոգոհու-
թիւնը զայնոյթի պիտի փոխուէր, եթէ
այս բարեկարգութեան ծրագիրն ալ
երթար դիւանատանց թղթերու մէջ,
միանալու մեռելածին պայմանագրու-
թեանց, պղտորական բարեկարգու-
թեանց ու անգործադրելի մնացած
հրամանագրութեանց: Մինչ զիւրա-
գէտները իրենց հաւաքական ծանո-
թագրերը կը շնչէին, անբերի կազմա-
կերպութիւնը իր գործը շարունակեց:
Սեպտեմբրի 10-ին պահպանութիւն ի նպաստ
ոչինչ բրած պիտի ըլլային՝ այսպէս
յետաձգելով ապստամբութեան մը պո-
թիւնը (որ կեռայ երկար ատենէ ի վեր)
ու պիտի չուզէր յայտնել զոհանայ: Ու
խաղաղութիւնը՝ զոր Պետութիւններն
ալ պահպանելու մէջ շահ ունին, ծա-
նորօրէն պիտի վտանգուէր, եթէ մեծ
աղմուկով Թուրքիոյ կողմէ բարեկարգ-
ման ծրագրին ընդունուած ըլլալը
հռչակելէ ետք, անոնց այնքան աչ-
համբերութեամբ սպասուած գործադ-
րութեան միջոց շատ մեծ ժամանակա-
միջոց մը թողլու անխոհմտութիւնը
գործէին:

Ուրեմն, Սուլթանին կողմէ աւստրո-
ուոս յիշատակագիրը ընդունելութիւն
գտնելու լուրը լաւ լուր մըն է: Բայց
այս լուրը իր բոլոր արժէքը պիտի
ունենայ միայն այն ատեն, երբ այդ
յիշատակագրին մէջ գրուած բոլոր
պայմանակները պիտի գործադրուին:
Պետութիւնները գործին ամենէն
քիչ ծանր մասը աղէկ զուլա հանե-
ցին: Բայց ասկէ վերջ ըլլալիքէն կա-
խում ունի Արեւելքի անդորրութիւն-
ը: Խօսքերէ հետք գործ պէտք է: Ու
այդ գործերուն մենք ալ կ'սպասենք:

ՖՈՒԱՏ ՓԱՇԱՅԻ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԿՏԱԿԸ

(Շար. նախորդ թիւէն)

Մեր բոլոր քաղաքական եւ քաղա-
քացիական հաստատութիւնները պէտք
է փոխուին: Անցելոյն մէջ բաւական
նին օգտակար շատ մը օրէնքներ մեր
արդի ընկերութեան վնասակար են:
Մարդ, ինքնին ընդունակ դէպի կա-
տարելութիւն յառաջանալու, պէտք
է անգագար ի բարեկարգութիւն ձգտի,
կատարելագործելով իր շահատակու-
թիւնները: Բարեբաղդաբար բնու-
թեան այս առաջին օրէնքը Մահմետա-
կան կրօնքի ոգիին կատարելապէս կը
համաձայնի: Որովհետեւ իսլամու-
թիւնը կը պարտաւէր բոլոր այն ճըշ-
մարիտ վարդապետութիւնները, որոնց
էական չափաւոր է աշխարհի եւ
մարդկութեան յառաջգիւտութիւնը: Ա-
նոնք որ այս կրօնքի անունով մեր
Պետութեան յառաջգիւտութիւնը արդի-
ւել կը պատրուակեն, ստուգիւ յիմար
հաւատարմանքներ են եւ ոչ Մահմետա-
կաններ:

Բոլոր միւս կրօնքները հաւատարմե-
ներով եւ սահմանուած սկզբունքնե-
րով կաշկանդուած, յառաջգիւտութեան
եւ մարդկութեան մտածութեան պատ-
ուարներ են: Իսլամութիւնը միայն,
զաղտնիքներով անկաշկանդ, ազատ
ամէն անսխալական կանոններէ, մեր
վրայ ծանրացող պարտականութիւնը
կընդունի, աշխարհի հետ յառաջգի-

Ա. ՇԻՏԱՆԵԱՆ (57)

ԹԻՍՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐԱՐԴ

ՅԵՂԱՓՈԹԱԿԱՆԸ ԻՐ ԴԵՐՆԵ ՄԵՋ...

Պատրիկ վեց-հարուածով իրարու ետեւէ գետին կը
փռէր դէպի իր ժայռը դիմող քուրտները:
Կիւրեւ կատարել էր...:

Այս դիւցազնական դիմագրութիւնն ամբողջ ութը
ժամ տուեց:

Լաւիզար չուտով վեց-հարուածները լեցունելու
կը զրազէր. իսկ Պատրիկ կը պարպեր թշնամիներու
վրայ:

Օ՛հ, ասանկ ճգնաժամի մը վեհութիւնն անոնք
միայն կրնան զգալ, որ տեսած են...:

Պատրիկ անպարտելի էր: Քուրտներու գնդակը չէր
հասնիր իրեն... Կարծես թէ աներեւոյթ ընդդի-
մադրութիւն մը կը զարնուէր գնդակին ու զայն
գողղողացնելով ապառաժին առջեւ կը ձգէր:

Բայց... անո՛ւ ամեն բան կը վերջանար: Վեց-
հարուածին փամփուշտը կը պակսէր երթալով:

Լաւիզար վերջին անգամ ըլլալով լեցուց Պատրիկի
վեց-հարուածը: Կը մնար մէկ փամփուշտ՝ զոր պահեց:
— Ուրիշ չկայ... հարցուց Պատրիկ:
— Ո՛չ... չեղանք Լաւիզար:
— Ուրեմն... մըմնջեց Պատրիկ ու կատաղութի-
ւէն ապառաժին վրայ կանգնելով վերջին գնդակն
ալ պարպեց:

Ու, այդ պահուն, քուրտներու շաշխանայէն հրա-
վառ կապարի կտոր մը միտնեցաւ Պատրիկի սրտին
մէջ...:

Դիւցազնը դողդղալով ծոցեցաւ ու ինկաւ Լաւիզարի
զրկին մէջ...:

Մահկանաւոր աղջիկը խռովուած յուզումներով մը
գլուխը դրաւ գիւցազնի կուրծքին վրայ, չըթուէր-
ները մտնեցուց անոր արեւնաճող վէրքին ու ծծեց
անոր կարմիր արեւը... Ետեւ համարեց անոր
ձուլտը, անոր կիսափակ աչքերը, անոր բերանը՝
որովհետեւ «այի», մայր իմ, մայր իմ» խղիւղած բառերը
կարտայայտուէին...:

Օ՛հ, մէկ խօսքով
Լեց անոր վերջին հրամանն ալ...:

Փամփուշտի չկար... քուրտները հասած էին իր
ժայռին տակ ու դէպի վեր կը բարձրանային:

Մեքենաւոր փէշին տակ ծածկուած վեց-հարուածը
ձեռքն ստաւ ու բերնին մէջ գնելով պայթեցուց
զայն...:

— Միտնի՛ն, Պատրիկ, միտնի՛ն... մըմնջեց Լա-
ւիզար ու ինկաւ իր պաշտելի դիւցազնին զրկաց
մէջ...:

Քուրտները երկիւղով զոգուեցին անոր մօտե-
ցան երկու անձնուրացներու մարմիններուն...:

Իրենց վրէժը լուծելու համար՝ զազանի մը պէս
յոշոտեցին այդ երկու մարմինները...:

ՎՏԱՆԴԻՆ ՀԱՆԴԻՊ

Թրքէշանի ապառաժաւու լիւններու մէջ Պատրիկ ու
Լաւիզար յօշոտուած էին վարդապետաւոր քուրտնե-
րէն... այս քառամեկ լուրը սարսափով մը լեցու-
ցած էր Վանի ամբողջ նահանգը:

Ի՞նչ հարկ էր մտածել:
Ի՞նչ հարկ էր բնել...:

Կատաղութիւնը չէր լսիր... ուղարկութեան ան-
գամ չէր առնիր... այլ զազանի կերպով կը թե-
լաղէր քուրտները, անոնց գէնք կուտար եւ խոս-
տումներով կը շլացնէր...:

Մահմետականութեան ոգին կը պատկերանար իր
բովանդակ գարշտութեան մէջ, ինչպէս թունաւոր
թո մը:

Անդունդը կը բացուէր...:

Ներսէս Արծրունին ու Վանական կը զգային թէ՛
վտանգին հանգէպ կը գտնուէին, ու անխուսափելի
կը դառնար:

— Ի՞նչ պէտք է բնել, Վանական, կը հարցնէր
Ներսէս Արծրունին խռովալոյզ ձայնով մը:

— Չեմ գիտիր... միայն թէ դանակը ոսկորին
հասած է, կը պատասխանէր Վանական վրէժալո-
րութեամբ լեցուած չեւտով մը: Ո՛հ, մեր անձնան
ընկերները մէկիկ մէկիկ կ'երան լեռներու մէջ...
մեր թշուառ եղբայրներու արեւը կը վազէ հեղեղի

Հայ Ուսանողական Միութեան
բանախօսներն են Տօքթ. Է. Լա-
տի Պոլսոյ ֆրանսական հիւանդա-
նոցին մէջ նախկին վիրաբուժ ու
Բրո Արմէնիակի խմբագրապետը՝
Բիէն Գիլյառ, որ նմանապէս
1896ին Պոլիս կը գտնուէր ու
կեղծ. վարժարանի ուսուցիչ էր:

ՍԹԱՆՊՈԼՏԱՆ Մ Է Ք Թ Ո Ւ Պ

Երևորդ քեօշկիւնտէ վէ Սուլ-
թանըն էթրաֆընտա պուլընան
էսկի թիւրքերէր վէ իսլահաթ թա-
րաֆտարը օլանլար պէյնիտէ շու-
սըրա իթիլաֆ վէ միւստէլէ վար
տըր: Տէօվէթլէրին իտտասսըն-
տան գուվէթ ալտարազ շու էսնա-
տէ իսլահաթ թարաֆտարլարը էսկի
թիւրքերտէն տահա թէէսիւրի
տիրէր: Նիհայէթ սէրայտա տէօ-
նէն էնթրիգալարտան տօլայը
Սթանպօլըն հալի թէհլիթէրի տիր:

Ալմանիա էլիսի պարօն Մար-
շալըն Սէրայտա վէ Պապը Ալիտէ
թէէսիւրի էն էիւքսէր տէրէճէտէ
օլտըրը հալտէ, պիր գաշ ալտան
պէրու տօլթանէ սուրէթտէ վէ
էսկի թիւրքերի կիւսէնտիւթէսի-
զին, Ապտիւլ-Համիտէ վէ վիւքէլա-
սընա իսլահաթ իճրա իտիլմէսի ի-
չիւն նասահաթ վէրմէքտէ իտի:
Մարշալըն շու զայրէթի մուհարէ-
պէյն սէպէպիյէթ վէրմէքտէ ար-
զուսընտան տօլայը ըտը. զիրա
մուհարէպէ Ալմանիանըն թիւր-
քիտտա օլան մէնֆաթլարընա
մազարրաթլը տըր:

Յագաթ պիր գաշ հաֆթատան
պէրու Սթանպօլտա էն պէօյիւք
թէէսիւր պ. Մարշալտան Բուս էլ-
չիսինէ կէշմիշ տիր: Մ. Ջինովիէվ
Բէթրսպուրկտան ալտըրը էմիր
իւզրէ, Մաքէթոնիտտա իսլահա-
թըն իճրասը իչիւն Բուսիանըն
թիւրք հիւքիւմէթինէ եարտըմտա
պուլընահաղընը վէ իսթիլալը
չէթէլէրի տաղըթմազ վէ մահվ
իթմէք պապընտա թիւրքիւնըն
էլէ ալահաղը շէտիտ թէտպիրէ-
րէ Բուսիանըն գարշը կէլմէյէճէ.
կինի վատ իթմիշ տէյօրլար. շու
շարթլէ քի՝ չէթէլէրին իւզէրինէ
եալընը նիղամի ասքէր կէօնտէ.
րիսին:

Աքսի օլտարազ՝ էկէր թիւրքիա
իսլահաթը իճրա իթմէզ իսէ.
Բուսիա Քիէվտէքի վէ Օտէստտա-
րօլ տօնանմասընա իլք էմիրտէ
հարէքէթէ հաղըր պուլընմազ ի-
չիւն էմիրլէր վէրէճէկինի իսթար
իթմիշ, Քէլա Սօֆիատա Բուս
մասլահաթկիւզարը Մ. Պահմէ.
թիէվ ալը լիսանլէ Բրէնս Յէր-
տինանտ իլէ կէօրիւշէրէք, «էկէր
Պուկարիա օսը չէթէլէրին եէնի-
տէն թէշքիլինէ մանի օլուպտէ
թիւրքիանըն իսլահաթ իճրասը-
նա գօլայըրզ վէրիւր իսէ, Բուսիա
Պուկարիայը վըգայէ իտէճէք

տէմիշ, Յագաթ աքսի հալինտէ,
Պուկարիա եիւզտէն պըրազըլահազ
վէ հէր հալտէ Բուսիա Մաքէթո-
նիանըն թէսքինի իչիւն իլք իշա-
րէթտէ հարէքէթ իթտիրմէք պա-
պընտա պիր օրտուսընը հաղըր
թուլթահազ տըր»:

Վէ ճիտտի օլտարազ, Քիէվ վէ
Օտէսա օրտուկարա լաղըմ կէլէն
թալիմաթ վէրիւմիշ վէ 300,000
րէտիլ: Բէք չապուզ սուրէթտէ
օրտուկեհալարընա թէճէմիւ օլը-
նահազ ըմըշ: Բէվայէթէ կէօրէ
տօնանմա տախի Գարա տէնիլտէ
հարէքէթէ հաղըր պուլընըյօր ըմըշ:
Աւստրօ-Հունգարիանըն էլչըսի
Մ. Գալիշ իրագտան քէնտի Բուս
րէթիգինին հարէքեաթընա իշթի-
րաք իտէյօր: Քէնտիսի 1897տէ
Պալգանլար իչիւն հասըլ օլան ի.
թիւրքըն մէպտէսինէ սատըգ պու-
լընըյօր իսէտէ. Մ. Ջինովիէվէ
նիսպէթէն Բէք իճրա թէէսիւր
իթմէյօր, զիրա պուլըն կէնճ հիւ-
քիւմտարը, Չար, էօթէտէն պէրու
Թիւրքիտտաքի խրիսթիանլարըն
համիսի ատտ օլընմըշ տըր:

Վիէննա, Պուտաբէշտ վէ Բոմա
մէճիսի մէպուսանլարընտա վա-
րիտ օլան սիւվալլէրէ ճէվապէն-
նաղըրլար պալատաքի մէքթուպըն
մաալընը թաստիգ իթմէքտէ տիր-
լէր: Եանի Աւստրիա վէ Բուս էլ-
չիլէրինտէն. թէրթիպ օլընան վէ
տիկէր տէօրթ պէօյիւք տէօվէթ-
լէրտէն միւստիպ կէօրիլէն վէ Սուլ-
թանա գապուլ իթտիրիլէն իսլա-
հաթ ճէտպէլինին հէր հալտէ իճ-
րասը իչիւն պիր թարաֆտան
թիւրքիայը թէհտիտ իտէյօրլար
վէ տիկէր թարաֆտան պուլկար-
լարըն պաշ գալտըրմասընը մէնն
իտէյօրլար: Բէսմէն վէրիլէն ի-
գահաթլարլէ տէօվէթլէր քէնտի-
լէրի տախի թալէպ օլընան իսլա-
հաթըն քէֆալէթսիպ օլտըրընը ի-
թիւրաֆ իթմիշ օլըյօրլար իսէտէ,
նէ չարէ, կէօրիւնիւշէ պինաէն, օն-
տան զիյատէ Սուլթանտան իմ-
թիւզաթ թալէպ իթմէք իչիւն
տէօվէթլէր պէյնիտէ իթթիֆազ
հասըլ օլմամըշ:

ՀԱՎԱՏԻՍԱԹԸ ԲՕԼԻԹԻԳԻՅԷ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա
Թիւրք հիւքիւմէթինին իսլա-
հաթը իճրա իթմէսինէ մանի օլմա-
մազ իչիւն, Մաքէթոնիայը մէօ
թէպէրանը վէ թէշկիւքիլէրի իս-
թիլալ չըգարմագտան սագընտըր-
մազ պապընտա՝ Բուսիա քէնտի
Սէլանիք, Մօնասթըր, վէ Քօօօ
վա գօնսօլուսընա թալիմաթ
վէրմիշ, շու թէհտիլտէ քի՝ աքսի
հալինտէ թիւրք հիւքիւմէթինին
էլէ ալահաղը շէտիտ թէտպիրէրէ
գարշը Բուս տէօվէթի անլէրի-
մուհաֆազ իթմէյէճէք տիր:

— Մօնասթըր վիւլայէթի տա-
խիլինտէ, Լապուսօվայա եագըն,
պիր պուլկար չէթէսի թիւրք ժան-
տարմա պէօլիւկին իւզէրինէ
հիւճուս իթտի. ժանտարմա գօ-
մանտանը էօլտիւ վէ իքի թարաֆ
տան պիր չօգ հարէլի տիւշտիւ:
— Օլտրիտայա եագըն գօմիթա-
լա՝ Վէրպահանի նամ սըրպ բա-
բասը վէ տիկէր՝ պիրինի գաթլ
իթմիշէր:

ՏԱԽԻԼԻՅԷ

Սօֆիատա նէշր օլընան Պոշ-
կարիա նամ նիմ րէսմի կազէթա,
Մաքէթոնիա իչիւն իսլահաթ ճէտ-
վէլինտէն մէմուռնիլէթ պէյան իթ-
մէքլէ պէրապէր, տէյօր «Եալընըզ
Մաքէթոնիայա իսլահաթ վէրմէքլէ
միւստիւմ Դարգ մէսէլէսի հալլ օ-
լամազ»:

— Բօլիսիա պիթթահարի գօ-
միթէլէրտէն տահա 200 ատէտ
թիւքէնկ պուլուպ իսթիլա իթմիշ
օլտըրը Սօֆիատան պիլտիրիլի-
յօր:

Ի Թ Ա Ղ Ի Ա

Ֆարանըն թախթա ճիւլուսընըն
25ինճի սէնէ տէվրիէսի օլմազ
միւնասիպէթլէ, Բոմատա իճրա օ-
լընահազ զիյնէթլէրէ հաղըր պու-
լընմազ իչիւն 60,000 քիշի զիւս-
րէթճի, 45 կարտինալ, 260 Ե-
պիսկոպոս, 7 բրէնս վէ բրէնսէս
թօրլանմըշ օլուպ, սալը կիւնիւ
Յօրէլէան զիյնէթլէրի իճրա օլըն-
մըշ տըր:

— Մէճիսի մէպուսանտա պիր
մէպուսըն Պալգան իչիլէրինտէն
տօլայը հիւքիւմէթի իսթիւմապ
իթմէսինէ ճէվապէն, վիւքէլա րէ-
լիսի տէմիշ տիր. «Թիւրքիտտաքի
խրիսթիանլարըն, պա խուսուս
Բուսիլի վիւլայէթլէրինտէ պուլը-
նանլարըն ահալինին իսլահա ի-
չիւն՝ տէօվէթլէր Պապը Ալիին
վաալարընը իճրա իթտիրմէկէ նէ-
զարէթ վէ տըգգաթ իթմէք պա-
պընտա գարալը գաթի վէրմիշէր
տիր. էվվէթ, եալընըզ վաալար
իթմէքլէ իշ պիթմէյէճէք տիր,
տէօվէթլէր քէնտի էլչիլէրի վէ
գօնսօլուսընը վասըթտաք իլէ զա-
լէթ տըգգաթլը սուրէթտէ իսլա-
հաթըն թէմամէն իճրասընա նէ-
զարէթ իտէճէքլէր: Դու հալտէ
խրիսթիան էհալիլէր տէօվէթլէ-
րին մագսէտ վէ զալլէթինէ էմ-
նիլէթ իթմէլի վէ իսթիլալա սէ-
պէպիլէթ վէրմէմէլի տիրէր, աքսի
հալտէ անլէրէ գարշը Սուլթանըն
զալիմանէ թէտպիրլէր էլէ ալմա-
սընա միւսատտէ վէրիլէպիլի»:

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

Մաքէթոնիատա սօն կիւնլէրտէ
զուհուրա կէլէն գօմիթէլէրին հա-
րէքեաթընտան տօլայը՝ Պապը
Ալի պիր պէյաննամէ թանգիմ իթ-

մէքտէ օլուպ, էլչիլէր վասըթտաք
իլէ պէօյիւք տէօվէթլէրէ կէօն-
տէրէճէք իմիշ:

— Սէլանիք, Մօնասթըր վէ
Քօօօվա վիւլայէթլէրի իչիւն թէր-
թիպ օլընան իսլահաթտան տօ-
լայր՝ Եուսնա հիւքիւմէթի տէօվ-
լէթլէրէ պիրէր թէշքէլլարնամէ
եօլլատը. վէ իլալէթէն, Եանիա
վիւլայէթլինտէ պուլընան Բուս
խրիսթիանլարըն ահալը մաղտու-
րէսի իչիւն՝ օրատա տախի ալը
սուրէթտէ իսլահաթ իճրա իթ-
տիրիլմէսինի րէճա էլլէտի:

Էսկի-Սիւրպիա թապիր օլընան
Ալպանիանըն պիր գըսմը իչիւն
տախի Սըրպ հիւքիւմէթի ալը
թալէպտէ պուլընահազ զանն օլը-
նըյօր:

Սուլթան պու ճիհէթլէրի հըսս
իտէրէք, տահա էվվէթլէն քէնտիսի
պիւթիւն Բուսիլի գըթտաքնա իս-
լահաթ իճրա իտէճէկինի սէօլլէ-
միշ իտի: Յագաթ շուրասը իս-
թըրտան տուր իթմէլէլիմ քի,
1895տէ՝ Էրմէնիստան իսլահաթը
գապուլ իթտիրմէք մէսէլէսինտէ,
Սուլթան պիւթիւն վիւլայէթլէրէ
իսլահաթ իճրա իտէճէլիմ տէմիշ
իտի. սօնրա գըրկընլար պաշլատը...

Պու չօրպա տահա չօգ սու գալ-
տրրր:

ԹԻԻՃՃԱՐԻՅԷ	
ՎԱՌՆԱ, 22 Փետրուար ՋԱՆԻՐԷ	
ՊՈՒՂՏԱԹ	
Վահոն Լիպ. 57-58 հքթ. 9.30/ 9.60	
Արապա լիպ. 53-62 հքթ. 9. —/ 10.40	
ԱՐԱՅԱ,	
Վահոն 100 քիւօ 10.20/ 10.30	
Արապա 45-50 լիպ. հքթ. 6. —/ 6.40	
ՋԱՎԱՏԱՐ	
Վահոն 53-54 լիպ. 7.40/ 7.80	
Արապա 8. —/ 8.40	
ՅԱՍՈՒԼԻԻԱ 100 քիւօ 16. —/ 22. —	
ԵՈՒԼԱՅ	
Վահոն 100 քիւօ 10.20/ 10.60	
Արապա հէքթ. 5.40/ 5.50	
ՄԻՍԻՐ	
Վահոն լիպ. 56-57 հէք. 7.90/ 8. —	
Արապա լիպ. 56-57 հքթ. 7.80/ 8.20	
ՏԱՐԸ	
Վահոն 100 քիւօ 9.60/ 10. —	
Վահոն մուսմէլէսի ալթուր ֆը- րանքլէ, արապա կիւմիւլէ: Նաթօ- լէօն 20.50 ֆրանք:	
ԲԱՄՈՒՔ	
Վարնա մաղաղալարընտա իրիւք սա- թընլարը:	
Ինկիլէք իրիւկի Ն. 8-14 10. —	
» » Ն. 18-24 12. —	
Երիւր իրիւք Ն. 8-14 9.60	
Աթըրմըշ բամուք հօդա 2. —	
Բամուք ֆիլաթլարը եիւքսէլմէք- տէ տիր:	

ՆՈՐ ԳԻՆԵՏՈՒՆ

Բացած ենք քաղաքիս նախ-
կին զօրանոցին գիմսը գինեմուռն
մը, եւ յարգոյ հասարակութեան կը
յայտարարենք թէ՛ այս նոր հաստա-
տութեանս մէջ կը գտնուին զուտ
խաղաղի օղի, ընտիր գինի եւ ուրիշ
ամէն տեսակ ըմպելիներ, մաքրու-
թեան հոգ կը տարուի:
Փորձով հաստատուել
Վ. Պետրուսեան եւ Գ. Պէյլիկեան Ընկ.
Одговорникъ Н. Д.
Печ. на Хр. Н. Войнико — Варна